ԼՌՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԵՆԹԱՏԵՔՍՏ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Մ.

Լռություն բառի արտաբերումն անգամ իր մեջ որոշակի ենթատեքստ է պարունակում: Ընդ որում՝ այդ բառի ամեն մի արտաբերման մեջ կարելի է որոնել ու բացահայտել տարբեր ենթատեքստեր: Եթե նույնիսկ «լռություն» բառը փորձենք հնչեցնել լռությամբ, միևնույն է, հնչյունների այնպիսի համադրում ենք լսում, որն ավելի շուտ և ավելի շատ վկայում է, որքան էլ որ դա տարօրինակ է, ոչ թե անդորրության ու համրության, այլ ինքնատիպ խոսքի ու աղաղակի մասին: Այլ խոսքով՝ լռությունը նույնիսկ հնչյունաբանական տեսակետից համր չէ և ունի իր ինքնատիպ լեզուն: Հենց այդ տեսանկյունից էլ լռությունը հաճախ հակադրվում է սովորական լեզվին ու խոսքին: Իհարկե, լեզվով արտահայտված ամեն մի խոսք նույնպես ունի իր ենթատեքստը, սակայն ասված կամ գրված (բանավոր կամ գրավոր) խոսքը նախնառաջ տեքստ է, որի ենթատեքստն էլ լռությունն է:

Թեպետ լռությունն իր էությամբ բազմաշերտ է և հենց այդ պատճառով էլ դիտարկվում է զանազան (հաղորդակցական, մշակութաբանական, հոգեբանական, ծիսական, կրոնա-միստիկական և այլն) տեսանկյուններից, այնուհանդերձ, բացատրական բառարաններում լռության ներքո, որպես կանոն, նկատի է առնվում ոչինչ չասելը: Օժեգովի, Շվեդովայի բացատրական բառարաններում «լռել» բառը մեկնաբանվում է երկու իմաստով. առաջին՝ ոչինչ չարտասանել, ոչ մի հնչյուն չարտաբերել, երկրորդ՝ ինչ-որ մի բան պահել գաղտնի, ինչ-որ բանի մասին չպատմել, չարտահայտվել[1]:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում[2] «լռել» բառը մեկնաբանվում է տասնվեց, իսկ «լռությունը»՝ չորս իմաստներով, որոնք էլ, իրենց հերթին, ունեն մի շարք ենթաիմաստներ: Այստեղ նույնպես՝ լռության ներքո հիմնականում ըմբռնվում է չխոսելը կամ ձայների բացակայությունը: Առօրյա մակարդակում ևս լռությունը նույնացվում է չխոսելուն: Սակայն իրականում միշտ չէ, որ լռելը և չխոսելը նույն իմաստն են արտահայտում: Լռությունը ոչ թե չխոսելն է, այլ խոսելն է առանց բառերի: Առաջին հայացքից կարող է արտառոց թվալ, թե ինչպես կարելի է խոսել առանց բառերի: Բայց խորանալով լռության ենթատեքստերի մեջ՝ պարզվում է, որ ոչ միայն կարելի է, այլև առանց բառերի խոսքը, այսինքն՝ լռությունը, առավել պերճախոս է:

Վաղնջական ժամանակներից սկսած՝ աշխարհի իմաստուն այրերը փորձել են պարզել, թե իմացաբանական կամ ծագումնաբանական առումով որն է առավել կարևոր և առաջնային՝ խոսքը, թե՞ լռությունը:

---

[1] Ozhegov. Info/slovar.

[2] *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1972, էջ 428:*

Լեհ երգիծաբան Ստանիսլավ Եժի Լեցը, լրացնելով Հովհաննես Ավետարանչի միտքը, սրամտում է՝ասելով, թե «Սկզբում եղել է խոսքը, իսկ հետո առաջացել է լռությունը»[3]:

Անշուշտ, սա ընդամենը սրամտություն է, բայց չի կարելի մոռանալ, որ սրամտությունը նույնպես ունի իր ենթատեքստը: Ճիշտ է, այդ սրամտությունն այնքան էլ համահունչ չէ Աստվածաշնչի համատեքստին, քանզի, ըստ Հովհաննեսի Ավետարանի՝ «Սկզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստուած էր»[4]: Ընդ որում՝ Բանը (հուն.՝ լոգոսը) ոչ միայն խոսք է, այլև միտք և նույնիսկ գործ: Սակայն, բացի հայերենից, գրեթե բոլոր լեզուները հունարեն «լոգոս» տերմինը թարգմանում են որպես «խոսք»: Ամենայն հավանականությամբ, եթե Ստանիսլավ Լեցը հույն կամ հայ լիներ, իր սրամտության համար ոչ մի հիմք չէր ունենա: «Լոգոսը» խոսք ընդունելով է, որ Գյոթեի Ֆաուստը, երկար երկմտելուց հետո հայտարարում է, թե սկզբում գործն է եղել: Իհարկե, Ֆաուստը շատ է տարակուսում լոգոսի իմաստը հավաստի մեկնաբանելու հարցում և դրա ներքո հասկանում է ոչ միայն խոսքը, այլև միտքն ու ուժը, սակայն, ի վերջո, նախապատվությունը տալով գործին՝ կամա թե ակամա խախտում է «Բան»-ի ներդաշնակությունը[5]:

Եթե Հովհաննես Ավետարանիչը հայտարարում է, որ աշխարհի արարումից առաջ եղել է Բանը, նա դրանով հավաստում է այդ եռամիասնության գոյությունը՝ի դեմս Հիսուս Քրիստոսի, որը միաժամանակ և՛ Աստծո Բանն էր, և՛ ինքն էլ Աստված էր:

Լռության ծագումը ժամանակային առումով դիտարկելով խոսքից հետո՝ Ստանիսլավ Լեցը ցանկանում է շեշտել, որ լռության տիրապետելը ավելի բարդ է, քան խոսելու ունակություն ձեռք բերելը: Այդ սրամտության մեջ կարելի է այլ ենթատեքստեր ևս որոնել, սակայն տվյալ համատեքստում այնքան էլ կարևոր չէ, թե ի սկզբանե ինչն է եղել՝խո՞սքը, թե՞ լռությունը: Կարևորն այն է, որ, իբրև ենթատեքստ, լռությունն իր էությամբ ու ծագմամբ ավելի խորհրդավոր է ու բազմանշանակ, քան խոսքը: Այդ կապակցությամբ բավական հետաքրքիր նկատառում ունի Պլուտարքոսը, որի համոզմամբ՝ «Լռության մեջ ինչ-որ վեհապանծ ու սրբազան բան կա, խորհրդավոր ինչ-որ բան»[6]:

Հենց այդ վեհապանծությունը, սրբազանությունն ու խորհրդավորությունն են, որ որոշ կրոններում արգելվել է բարձրաձայն արտաբերել Տեր Աստծո անունը: Տվյալ արգելքը մի շարք ենթատեքստեր ունի, և դրանք խորությամբ ըմբռնելու համար անհրաժեշտ է դիտարկել տարբեր ենթատեքստեր: Չխորանալով այդ ենթատեքստերի մեջ՝ կարող ենք փաստել, որ Աստծո հետ հաղորդակցությունը մի այնպիսի երկխոսություն է, որը, նախևառաջ, պահանջում է

---

[3] http://letter.com.ua/aphorism/mol9.php

[4] Աստվածաշունչ: Նոր կտակարան: Հրատարակութիին Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994-ՌՆԽԴ, էջ 120:

[5] Տե՛ս **Գյոթե,** Ֆաուստ, մաս Ի՝ Բ. Պաստեռնակի թարգմանությունը և Պ. Միքայելյանի թարգմանությամբ, Ե., 1963, էջ 67:

[6] **Պլուտարքոս,** Երկեր, Ե., 1987, էջ 537:

լռություն: Պատահական չէ, որ այդ հաղորդակցության գլխավոր և հիմնական ձևը՝ աղոթքը, առանձնանում է լռությամբ:

Չարտաբերված խոսքի կամ լռության դերը հաճախ է կարևորել Հիսուս Քրիստոսը: Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարաններում կուսակալ Պիղատոսի այն հարցին՝ «Դո՞ւ ես հրեաների թագավորը», Հիսուսը ընդամենը պատասխանում է. «Դու ես ասում» կամ «Դու ասացիր»: Իսկ երբ Պիղատոսը նրան հարցնում է. «Չե՞ս լսում, թե ինչքան են քո դեմ վկայում», Հիսուսը Պիղատոսին ոչինչ չի պատասխանում և դրանով իսկ մեծ զարմանք է պատճառում կուսակալին:

Լռության ենթատեքստը բավական հետաքրքիր կերպով է մեկնաբանում Հովհաննես Ավետարանիչը: Նրա տեքստում Հիսուսը Պիղատոսին ասում է. «Ամեն մարդ, որ ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է»[7]:

Փաստորեն, ըստ Հիսուսի՝ նրա լռությունը անձայն լռություն չէ, ունի իր ենթատեքստը, որն էլ հասու է միայն նրանց, ովքեր ճշմարտությունից են: Առավել ուշագրավ է Պիղատոսի հաջորդ հարցը Հիսուսին՝ «Ի՞նչ է ճշմարտությունը»[8]: Թե ինչ է պատասխանել Հիսուսը Պիղատոսին, մենք ոչինչ չգիտենք, քանի որ Հովհաննես Ավետարանիչը այդ մասին ոչինչ չի ասում: Ըստ էության՝ Պիղատոսի տվյալ հարցին Հիսուս Քրիստոսը պատասխանել է լռությամբ, և այդ լռության ենթատեքստը կամ Պիղատոսի հարցի պատասխանը մինչ օրս փիլիսոփայության մեջ միանշանակ լուծում չի ստացել ու դժվար թե երբևէ ստանա: Հովհաննես Ավետարանիչը կարողացել է ամենայն խորությամբ ըմբռնել Հիսուսի էությունը, և այդ պատճառով էլ՝ նրա Ավետարանում Հիսուսն անպատասխան է թողել Պիղատոսի հարցը:

Կարելի է ասել, որ իր առեղծվածային էությամբ ու խորհրդավորությամբ, ենթատեքստի բազմանշանակությամբ լռությունը դարձել է Աստծո՝ իր կողմից արարված էակների հետ հաղորդակցվելու հիմնական միջոցը, ամենազոր Արարչի ինքնատիպ բարբառը:

Չգտելով հասու լինել Աստծո էությանը՝ մարդիկ նախնառաջ պետք է փորձեն ըմբռնել նրա լռությունը: Լռության աստվածային շնորհը հատուկ շեշտել է դեռևս Պլուտարքոսը, որի համոզմամբ՝ «խոսելը մենք սովորում ենք մարդկանցից, լռելը՝ աստվածներից, քանզի ծեսերում ու խորհուրդներում մենք ընտելանում ենք լռությանը»[9]:

Ինչ վերաբերում է Քրիստոսի լռության ենթատեքստին, ապա այն հետաքրքիր լուծում է ստացել Ֆեոդոր Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վեպում: Այդ վեպի հինգերորդ գրքի հինգերորդ գլխում Իվան Կարամազովը ներկայացնում է իր կողմից հորինած մի գործողություն, որն իբր տեղի է ունեցել XVI դարում: 15 դար անց Իսպանիայի Սևիլյա քաղաքում Հիսուսն իր մարդկային կերպարանքով կրկին հայտնվում է մարդկանց: Նա հայտնվում է մեղմիվ,

---

[7] *Աստվածաշունչ: Նոր կտակարան: Մ.Ա. Ս. Էջմիածին, 1994, էջ 146:*

[8] *Նույն տեղում:*

[9] **Պլուտարքոս,** *նշվ. աշխ., էջ 528:*

աննկատելի, սակայն բոլոր մարդիկ ճանաչում են նրան: Նա լուռ ընթանում է բազմության մեջ՝ անհուն ողորմածության մեղմ ժպիտը դեմքին: Մեծ Հավատաքննիչ կարդինալը՝ գրեթե իննսունամյա մի ծերունի, պահակախմբին հրամայում է ձերբակալել նրան: Այնքան հզոր է Մեծ Հավատաքննիչը, ժողովուրդն արդեն այն աստիճան վարժվել է ենթարկվելու նրան և դողահար հնազանդվելու, որ ամբոխն անմիջապես ճանապարհ է բացում, և պահակախումբը, վերահաս մեռելային լռության մեջ, ձերբակալում ու տանում է Հիսուսին: Մեծ Հավատաքննիչը մոտենում է գերյալ Հիսուսին և ասում նրան.

–Դո՞ւ ես, Դո՞ւ:– Սակայն, պատասխան չստանալով, շտապ ավելացնում է.– Մի՛ պատասխանիր, լուռ մնա: Եվ ի՞նչ կարող էիր ասել արդյոք: Ես չափազանց լավ գիտեմ, թե ինչ կասես: Բայց դու իրավունք իսկ չունես որևէ բան ավելացնելու քո նախկին ասածի վրա:

Մեծ Հավատաքննիչ կարդինալին կամ որ նույնն է՝ Իվան Կարամազովին թվում է, թե ինքն ամբողջությամբ ըմբռնել է Հիսուսի խոսքը, ուստի միայն լռություն է նրանից պահանջում: Սակայն Մեծ Հավատաքննիչը չգիտե, որ Հիսուսի և՛ խոսքը, և՛ լռությունը բազում ենթատեքստեր ունեն: Այդ իսկ պատճառով էլ ծերունի Հավատաքննիչը ցնցվում է, երբ երկար լռությունից հետո գերյալ Հիսուսը լուռ մոտենում է և մեղմիվ համբուրում նրա իննսունամյա անարյուն շրթունքները: Ըստ Իվան Կարամազովի հորինած պոեմի՝ դրանից հետո ծերունին ազատ է արձակում գերյալ Հիսուսին և ասում նրան. «Գնա՛ և մի՛ գա այլևս... բնա՛վ մի գա... երբե՛ք, երբե՛ք»[10]:

Եղբոր՝ Ալյոշա Կարամազովի այն հարցին, թե գերյալ Հիսուսի գնալուց հետո ինչպես է վարվում Մեծ Հավատաքննիչը, Իվանը պատասխանում է, որ ծերունին մնում է իր նախկին գաղափարին կառչած: Տեսնելով, որ Իվանը շարունակում է հավատարիմ մնալ իր իսկ հորինած «եթե Աստված չկա, ուրեմն ամեն ինչ թույլատրելի է» բանաձևին՝ Ալյոշան մոտենում է նրան և լուռ համբուրում նրա շրթունքները: Հիսուսի լռություն-համբույրի ենթատեքստում կարելի է շատ բան որոնել, սակայն դրանք բոլորն էլ, ի վերջո, հանգում են մի կարևոր գաղափարի՝ Հիսուսը ներում է Մեծ Հավատաքննիչին: Իվանը դա չի հասկանում, քանի որ նա այդ համբույրը վերլուծում է ռացիոնալիզմի դիրքերից: Սակայն հումանիստ-բարոյագետ Դոստոևսկին Հիսուսի լռության ու համբույրի ենթատեքստերում աստվածային գթասրտություն է տեսնում: Այդ ամենը բացահայտ և ոչ բացահայտ ձևերով բխում է ստեղծագործության ոգուց, Ալյոշա Կարամազովի, ինչպես նաև սրբահայր Զոսիմայի կերպարներից: Տվյալ հիմնախնդիրը, ըստ էության, ճիշտ է մեկնաբանում ռուս գրաքննադատ Նազիրովը[11]:

Լռության հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականությունը

---

[10] **Դոստոևսկի Ֆ. Մ.,** *Կարամազով եղբայրներ, հ. I, Ե., 1983, էջ 372-373:*

[11] **Назиров Р. Г.** *Фигура умолчания в русской литературе (Поэтика русской и зарубежной литературы: сборник статей, Уфа, 1998, с. 57-71).*

հիմնականում լռություն է պահպանել: Իր մի շարք աշխատություններում (որոնց հետագայում անդրադարձ կկատարվի) լռության էությունը փիլիսոփայական տեսանկյունից առանձին դրվագներով մեկնաբանել է ակադեմիկոս Գ. Բրուտյանը: Ժամանակակից ռուսական գիտական գրականության մեջ լռության էությունը հիմնականում ներկայացվում է լեզվաբանական և գրականագիտական տեսանկյունից[12]*:*

Մարդուն մտածող եղեգ դիտարկող Բլեզ Պասկալի համոզմամբ՝ «Մեր ողջ արժանիքը մտածելու մեջ է: Հենց դրանով պիտի վեհանանք և ոչ թե տարածությամբ ու ժամանակով, որ չենք կարող լցնել»[13]*: Պասկալը մտածելը հակադրում է լռելուն, քանի որ այդ մտքից հետո անմիջապես հայտարարում է՝ «Անհուն տարածությունների հավիտենական լռությունը սարսափեցնում է ինձ»*[14]*: Թեև այստեղ խոսքը անհուն տարածությունների հավիտենական լռության մասին է, սակայն ինքնին հասկանալի է, որ Պասկալին սարսափեցնում է լռության ենթատեքստերի բազմազանությունը, խորհրդավորությունը, անկանխատեսելիությունն ու առեղծվածային էությունը:*

Ալբեր Քամյուի կարծիքով՝ «Մարդ ավելի մարդ է իր լռությամբ, քան այն ամենով, ինչ ասում է»[15]*:*

Առաջին հայացքից՝ այս միտքը կարող է արտառոց թվալ, քանզի մարդու էության դրսևորման հիմնական ձևերից մեկն էլ խոսքն է: Պատահական չէ, որ, ի տարբերություն անասուն կենդանու, մարդը կոչվել է ասուն: Այս ամենը, անշուշտ, անվիճարկելի է: Գաղտնիք չէ, սակայն, որ խոսքը միշտ չէ արտահայտում խոսողի բուն նպատակն ու ցանկությունը: Ինչպես նշել է Միշել Մոնտենը՝ «...որքան է սուտասան լեզուն, որպես հաղորդակցության միջոց, ավելի վատ, քան լռությունը»[16]*:*

Սակայն իմացաբանական նշանակության տեսակետից այնքան էլ տեղին չէ բաղդատել խոսքը և լռությունը: Պարզապես պետք է խնդիրը դիտարկել տեքստի և ենթատեքստի համատեքստում՝ որպես տեքստ դիտարկելով խոսքը, իսկ որպես ենթատեքստ՝ լռությունը: Այդ համատեքստում չի կարելի միանշանակ ասել, թե նա, ով լռում է, անվերապահորեն խելոք է և իրավացի, իսկ նա, ով խոսում է՝ հիմար է և ոչ իրավացի: Դա նշանակում է, որ ամեն մի լռություն ունի իր ենթատեքստը և այն էլ՝ մի քանիսը: Ընդ որում՝ դրանք

---

[12] *Տե՛ ս* **Александрова И. Б.** *Слово о молчании (Русская речь, 2005, N 4, с. 70-75);* **Арутюнова Н. Д.** *Молчание: контексты употребления (Логический анализ языка: язык речевых действий, М., 1994, с. 106-117);* **Сеничкина Е. П.** *Молчание: лингвистический аспект (Русский язык в России на рубеже XX-XXI вв. Материалы международной научной конференции, Самара, 2003, с. 70-74).*

[13] **Պասկալ Բ.,** *Մտքեր, Ե., 2003, էջ 120:*

[14] *Նույն տեղում, էջ 120:*

[15] **Քամյու Ա.,** *Սիզիփոսի առասպելը, Ե., 1995, էջ 98:*

[16] **Մոնտեն Մ.,** *Փորձեր, Ե., 1991, էջ 40:*

պետք է ըմբռնել ու մեկնաբանել ժամանակի ու տարածության համատեքստում՝ հաշվի առնելով լռության սուբյեկտն ու օբյեկտը և մի շարք բարոյահոգեբանական, իրավաքաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ գործոններ: Իհարկե, որպես կանոն, նա, ով լռում է, հաճախ զերծ է մնում ավելորդ պատաս-խանատվությունից և անհարկի կշտամբանքներից ու պատիժներից: Այդ կապակցությամբ հրեա իմաստուններից մեկն ասել է. «Ես հաճախ եմ զղջացել, որ խոսել եմ, բայց հազվադեպ եմ ափսոսել, որ լռել եմ»[17]: Վերոհիշյալ մտքին, որը հայտնի էր դեռևս Պլուտարքոսին իբրև Սիմոնիդեսի ասույթ[18], իր տրամաբանական հիմնավորումն է տալիս հրեա իմաստունի հետևյալ ասույթը. «Քանի դեռ խոսքը չի ասվել, նա այն ասել ցանկացողի բանտարկյալն է, իսկ երբ խոսքն ասված է, խոսողն է դառնում նրա գերին»[19]:

Սակայն լռությունը միշտ չէ, որ վստահելի երաշխիք է անախոր-ժություններից խուսափելու համար: Ինչպես նշել է կորեացի բանաստեղծ Կիմ Սան Յոնը.

Լռե՛ս՝ հիմարի տե՛ղ են դնում,
Իսկ թե խո՛սք ասես՝ միամիտի[20]:

Մարդիկ լռում են տարբեր պատճառներով՝ վախից, զայրույթից, տրված հարցի անհեթեթ կամ արտառոց լինելուց, գաղտնիքը հայտնելու մտավախությունից, զրուցակցի հետ հաղորդակցվելը անպատվաբեր համարելուց, իրենց իրական մտադրությունները և մտավոր կարողությունները լռության դիմակի տակ թաքցնելուց, անասելի մեծ վշտից կամ աննկարագրելի ուրախությունից և զանազան այլ շարժառիթներից ելնելով: Այդ համատեքստում լռության վերաբերյալ իր բացատրությունն է տալիս նաև Պարույր Սևակը՝ նշելով.

Հաճախ լռում եմ,
Երբ ճիշտ ասածս դիտմամբ ծռում են[21]:

Ակադեմիկոս Գ. Բրուտյանն իր «Իմաստասիրությունը երկխոսու-թյուններում» գրքում նշում է, որ 17-ամյա Նատալիա Խատկինան «Բառերը» բանաստեղծության մեջ ենթադրում է, թե ճիշտ կլինի լռել, քանզի բառերը շատ կրկնելուց մաշվում են: Դիտարկելով այդ տեսակետը տարբեր համատեքստերում՝ Գ. Բրուտյանը եզրակացնում է. «…այնքան անսպառ է մարդկային բառապաշարը, որ ինչքան էլ մաշվեն բառերը, մարդը անբառ չի մնա և, այդ պատճառով չէ, որ երբեմն անհրաժեշտ է ոչ թե խոսել, այլ լռել»[22]:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է ասել, որ բավականին դժվար է դառնալ խորին լռության վերծանողը, երբ ենթատեքստերն այդքան շատ են և գաղտնիքներն այդքան խորունկ: Ենթատեքստերի բազ-

---

[17] **Աբուլ-Ֆարաջ,** *Հետաքրքրաշարժ պատմությունների գիրք, Ե., 1981, էջ 57:*

[18] **Պլուտարքոս,** *նշվ. աշխ., էջ 543-544:*

[19] **Աբուլ-Ֆարաջ,** *նշվ. աշխ., էջ 57:*

[20] **Էմին Գ.** *Գիրք թարգմանությանց, Ե., 1984, էջ 163:*

[21] **Սևակ Պ.,** *Հավատում եմ, Ե., 1972, էջ 404:*

[22] **Բրուտյան Գ.,** *Իմաստասիրությունը երկխոսություններում, գիրք 2, Ե., 1981, էջ 41-42:*

մազանությունը և դրանց առեղծվածային էությունը տրամաբանական և հոգևոր անմիջական կապ են ստեղծում լռության և զարմանքի միջև: Դեռևս Արիստոտելն է նշել, որ «զարմանքն է մարդկանց դրդել փիլիսոփայելու…»[23]:

Ինչպես փիլիսոփայությունն է ծնվել զարմանքից, այնպես էլ լռությունը ինչ-որ տեղ և ինչ-որ մի պահ զարմանքի արգասիք է: Ոմանք զարմանում են և ինչ-որ մի պահ կորցնում խոսելու ունակությունը, իսկ ոմանք էլ ցանկանում են զրուցակիցներին զարմացնել իրենց լռությամբ:

Աթենքում մի մարդ հյուրասիրում է օտարերկրյա թագավորի դեսպաններին: Խնջույքի ժամանակ աշխույժ զրույց են վարում բոլոր հյուրասիրվողները, լռում է միայն փիլիսոփա Զենոնը: Հրաժեշտի ժամանակ բարձրաստիճան հյուրերը խնդրում են Զենոնի կենացը և հարցնում, թե նրա մասին ինչ պատմեն իրենց թագավորին: Զենոնը պատասխանում է.»Ոչի՛նչ, բացի նրանից, որ Աթենքում կա մի ծերունի, որը կարողանում է լռել կերուխումի ժամանակ»[24]: Այն հարցին, թե ինչու է ինքը լռում, Հերակլիտեսը մի առիթով պատասխանել է. «Որպեսզի դուք շատախոսեք»[25]: Հերակլիտեսի այդ նկատառումը համահունչ է դեռևս հին աշխարհում ընդունված այն մտայնությանը, համաձայն որի՝ «լռությունն իմաստության պատվարն է», «խոսքն արծաթ է, լռությունը՝ ոսկի»:

Լռության վերաբերյալ գոյություն ունի մեկ այլ արմատացած կարծիք ևս, որը ոչ բոլոր պարագաներում է ճշմարիտ: Խոսքը «Լռությունը համաձայնության նշան է» ասույթի մասին է, որն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Հռոմի Բոնիֆացիոս VIII Պապը: Իրականում լռությունը հաճախ անհամաձայնության նշան է: Պատմությունը վկայում է, որ ժողովուրդը երբեմն անարձագանք է թողել բռնակալների՝ իրենցից բացականչություններով հավատարմության երդում ստանալու խոստումը: Այդ պահը ցայտուն կերպով է արտահայտված հատկապես Շեքսպիրի «Ռիչարդ III» և Պուշկինի՝ «Բորիս Գոդունով» ստեղծագործություններում: Ահա թե ինչպես է ներկայացնում այդ տեսարանը Շեքսպիրը.

Բուկինգեմ.
……..
Եվ ճառիս վերջում բացականչեցի.
-Ով հայրենիքին բարիք է ուզում, թող գոչի ինձ հետ.
«Կեցցե՝ Ռիչարդը, Անգլիո արքան»:

Գլոստեր.
Եվ ի՞նչ, գոչեցի՞ն:

Բուկինգեմ.

---

[23] **Аристотель.** *Метафизика. Соч. в четырех томах, т. 1, М., 1976, с. 68.*

[24] **Պլուտարքոս,** *նշվ. աշխ., էջ 525:*

[25] **Диоген Лаэртский.** *О жизни, учениях и изречениях знаменитых философов, М., 1986, с. 336.*

Վկա է աստված, մի խոսք չասացին,
Բայց մեռելատիպ նայեցին իրար
Արձանների պես[26]:

Առավել ցայտուն և ուշագրավ պատկեր է ներկայացնում Ա. Պուշկինը.

Мосальский.
Народ! Мария Годунова и сын ее Феодор отравили себя ядом.
Мы видели их мертвые трупы.
Народ в ужасе молчит.
Что ж вы молчите? Кричите: да здравствует царь
Димитрий Иванович!
Народ безмолвствует[27].

Հետաքրքիրն այն է, որ ողբերգության ձեռագիր տարբերակում ժողովուրդն արձագանքում է Մոսալսկու կոչին և գոչում՝ «Կեցցե՛ ցար Դմիտրի Իվանովիչը»: Սակայն հետագայում՝ 1830 թ. «Բորիս Գոդունով» ողբերգությունը տպագրության նախապատրաստելիս, Պուշկինը կատարում է իր հանճարեղ ուղղումը՝ «Народ безмолвствует», որով էլ և ավարտվում է ստեղծագործությունը[28]:

Այդ կարգի լռություններն իրենց մեջ խորունկ իմաստ են պարունակում: Ենթատեքստերից կարելի է եզրակացնել, որ ժողովրդի լռությունը սպառնալիք է բռնակալների հանդեպ: Իհարկե, պաշտոնական և ծառայողական հարաբերություններում ենթակաները հաճախ ասում են «ճիշտ այդպես», «այո», «ինչպես կամենաք» և այլն, սակայն միանշանակ չի կարելի ասել, թե հաստատական բոլոր դատողությունները համաձայնության նշան են: Նույն կերպ՝ լռությունը ևս խոսուն է և կարող է արտահայտել ինչպես համաձայնություն, այնպես էլ՝ անհամաձայնություն:

«Լռե՞լ»: «Արդյո՞ք միշտ»: «Եվ եթե լռել, ապա ե՞րբ»: Այս հարցերը վաղուց ի վեր հուզել են գեղարվեստական խոսքի վարպետներին: Վերոնշյալ հարցադրումները համեմատական վերլուծության են ենթարկվել ակադեմիկոս Գ. Բրուտյանի մի շարք աշխատություններում:[29]

Կարելի է ասել, որ Սոկրատեսի Դեմոնի նման լռությունն էլ ունի իր ձայնը և նրա պես երբեմն հակառակվում է մեր մտքերին, ընդ-

---

[26] **Շեքսպիր Վ.** *Ռիչարդ Երրորդ, Ընտիր երկեր 2 հատորով, հ. 2, Ե., 1964, էջ 103:*

[27] **Пушкин А.С.** Борис Годунов. Избранное, М., 1975, с. 493-494.

[28] *Տե՛ս նույն տեղում:*

[29] *Տե՛ս* **Брутян Г.** *Логическое в зеркале филологического, Е., 2007, с. 44-48.* **Բրուտյան Գ.,** *Իմաստասիրությունը երկխոսություններում, գիրք 2, Ե., էջ 24-26, 38-43 և այլն:*

հատում խոսք արտահայտելու մեր ձգտումը: Այլ խոսքով՝ լռությունը հաղորդակցման գործընթացում և աստիճանակարգում նախապատվելի դիրք է գրավում, քանզի այն լրացուցիչ հնարավորություն է ընձեռում խորհելու, իսկ ապա՝ պատասխանելու հնարավոր ամեն մի հարցի: Կարելի է ասել՝ լռությունն ունի այնքան ենթատեքստեր, որքան հնարավոր են լռողին հղված հարցերը:

Օգյուստ Ռոդենի «Մտածողը» քանդակում մենք նկատում ենք մի խորհրդավոր լռություն և կամա թե ակամա սկսում ենք մտահոգվել, թե ինչ հարցերի շուրջ է խորասուզվել քանդակի հերոսը: Եթե Շեքսպիրի Համլետը խորհում է՝ «Լինել, թե չլինել» և վիճարկում, թե որն է դրանցից «առավել ազնիվ», ապա Ռոդենի կերպարի լռության ենթատեքստերը կարելի է մեկնաբանել՝ ապավինելով միայն դիտողի երևակայությանն ու հոգեկերտվածքին, նրա արժե-քային ըմբռնումներին: Առեղծվածային լռությամբ է համակված նաև Լեոնարդո դա Վինչիի «Ջոկոնդա» կտավում Մոնա Լիզայի լուռ ժպիտը: Այդ առումով ևս՝ լռությունը նման է փիլիսոփայու- թյանը: Պատահական չէ, որ ամերիկացի փիլիսոփա Մորիս Լազարևիչը փիլիսոփայությունը համարել է Մոնա Լիզայի ժպիտով մի սֆինքս, որը շատերին հիացմունք է պատճառում, սակայն նրա առեղծվածը մնում է չբացահայտված[30]:

Դիցաբանական Էդիպը կարողացավ հեշտությամբ լուծել Սֆինքսի առաջադրած հանելուկը՝ պատասխանելով, որ առավոտյան չորս ոտքով, կեսօրին՝ երկու, իսկ երեկոյան՝ երեք ոտքով քայլող միակ կենդանին մարդն է: Սֆինքսը թափահարեց թևերն ու ժայռից ծովը նետվեց, որովհետև աստվածները նման ճակատագիր էին նրա համար վճռել: Սակայն իրեն վիճակված սոսկալի ճակատագրից չխուսափեց նաև Էդիպը. նա սպանեց իր հորը, ամուսնացավ հարազատ մոր հետ, իսկ այդ ամուսնությունից ծնված երեխաներին նզովեցին Աստվածները: Դելֆյան պատգամախոսը Էդիպին հայտնել էր այդ ճակատագրի մասին, սակայն չէր հայտնել նրա ծնողների անունները: Ապոլլոն աստծո պատգամախոսի լռությունն այդ հարցում առավել դժվար էր բացահայտել, քան Սֆինքսի հանելուկը, ուստի ճակատագրի հարվածն անխուսափելի էր:

Լռության հարցի բարդությունը գիտակցելով՝ Պ. Սևակն իր «Մի՛, մի՛» բանաստեղծության մեջ գրում է.

Մեծ տուրք կվճարեմ ես լռության դիմաց,
Միայն թե, խնդրո՛ւ մ եմ,
Մի՛ տանջիր ինձ հարցով[31]:

Լռությունը լայն հնարավորություններ է ընձեռում ոչ միայն զրուցակցի հարցերին հստակ և համոզիչ պատասխանելու, այլև ստեղծագործական ներշնչանքի պահեր ապրելու և արարելու համար: Այդ պահը շատ գեղեցիկ է արտահայտել Ֆեոդոր Տյուտչևն իր «Տեսիլք» բանաստեղծության մեջ.

---

[30] **Брутян Г.** *Очерки по анализу философского знания, Е., 1979, с. 7.*

[31] **Սևակ Պ.,** *Մի՛, մի՛..., Ե., 1972, էջ 305:*

Կա՛ գիշերվա մեջ համաշխարհային լռության մի ժամ,
Այդ խորհրդավոր, տեսիլքների ու հրաշքի ժամին,
Այնպես աննկատ դեպի երկնքի այդ տաճա՛ր բա՛ց
Լռ՝ լռ գլորվում է ողջ տիեզերքի կա՛ռքը կենդանի՛:

Մութն է թանձրանում՝ ինչպես քառսը ջրերի վրա,
Անգիտակցությունն աշխարհն է ճնշում իր ծա՛նր ձեռքո՛վ,
Եվ աստվածները բարի Մուսայի հոգի՞ն են միայն
Անհանգիստ դարձնում՝ երազանքների գուշակումներով[32]:

Անդրե Մորուայի համոզմամբ՝ «Մինչ մարդիկ լռում են, ժամանակ ունեն որոշում ընդունելու»[33]*:*

Չի կարելի անտեսել մի կարևոր հանգամանք ևս, որը Մորուան հատուկ շեշտել է զրույցի արվեստում՝ նշելով. «Հաճախ միևնույն թաքուն և վտանգավոր միտքն անցնում է միանգամից երկու զրուցակիցների գլխով: Ամեն մեկը գիտե, որ մյուսը մտածել է նույն բանը, բայց այդ մասին բարձրաձայն չի ասվում...»[34]*:*

Բարձրաձայն ասվածի (խոսք-տեքստի) և չասվածի (լռություն-ենթատեքստի) միջև գոյություն ունեցող հակասությունը բավականին ցայտուն է ներկայացված Լև Տոլստոյի «Հաջի-Մուրադ» վիպակում, Հաջի-Մուրադի և Կովկասի փոխարքա Վորոնցովի հանդիպման ժամանակ.

«Հանձնվում եմ մեծ թագավորի և ձեր բարձր հովանավորությանը: Խոստանում եմ հավատարմորեն, մինչև արյան վերջին կաթիլը ծառայել սպիտակ թագավորին և հուսով եմ, որ օգտակար կլինեմ Շամիլի՝ իմ և ձեր թշնամու դեմ մղվող պատերազմում: Թարգմանին լսելուց հետո Վորոնցովը նայեց Հաջի-Մուրադին, և Հաջի-Մուրադն էլ Վորոնցովի երեսին նայեց: Այդ երկու մարդկանց աչքերը, հանդիպելով իրար, շատ բան ասացին միմյանց, որ անկարելի էր արտահայտել բառերով, և ասացին բոլորովին էլ ոչ այն, ինչ թարգմանն էր հաղորդում: Նրանց աչքերն ուղղակիորեն, առանց խոսքերի, ողջ ճշմարտությունն էին արտահայտում մեկը մյուսին: Վորոնցովի աչքերն ասում էին, թե ինքը չի հավատում Հաջի-Մուրադի և ոչ մի խոսքին, թե ինքը գիտի, որ նա թշնամի է ամենայն ռուսականի, միշտ էլ կմնա այդպիսին, և թե հիմա հպատակվում է այն պատճառով միայն, որ ստիպված է: Հաջի-Մուրադն էլ էր հասկանում այդ բանը և, այնուհանդերձ, հավատացնում էր, թե նվիրված է նրանց: Իսկ Հաջի-Մուրադի աչքերն ասում էին, թե այս ծերունուն վայել էր մտածել մահվան և ոչ թե պատերազմի մասին, բայց թեև ծեր է՝ խորամանկն է շատ, և հարկավոր է զգույշ լինել նրա հետ»[35]*:*

Լռությունն իբրև ենթատեքստ ունի բավականին խոսուն և պերճ ու աշխույժ լեզու: Այդ լեզուն, այսինքն՝ լռության լուռ ճիրաններում շղթայված ու չասված խոսքը, կարելի է լսել լուռ զրուցակցի փակ շուրթերից, դիմախաղից, հոգու հայելի աչքերից, մատներից և

---

[32] **Տյուտչև Ֆ.,** *Տեսիլք, Ե., 1977, էջ 9:*
[33] **Մորուա Ա.,** *Հույսեր և հուշեր, Ե., 1986, էջ 324:*
[34] *Նույն տեղում, էջ 323:*
[35] **Տոլստոյ Լ.,** *Վիպակներ և պատմվածքներ, Ե., 1986, էջ 48:*

անգամ զրուցակցի կանգնած դիրքից: Սակայն այդ ամենն ըմբռնելու համար հզոր երևակայություն, հոգեբանական նուրբ հոտառություն, կամք և նախազգացում է պահանջում: Դա շատ քչերին է տրվում և այն էլ ոչ բոլոր դեպքերում: Լռության ենթատեքստերի բազմազանությունը զրուցակցից թաքցրած տեքստը վերածում է բարդ ու խրթին խնդրի, որի համեմատ Սֆինքսի առաջադրած հանելուկները պարզ ու սովորական վարժություններ են թվում: Նման պարագայում՝ բառերն ու խոսքերը լռության ենթատեքստի լուծման գործում չեն կարող երաշխիք և հուսալի բանալի ծառայել: Ահա այդպիսի մի իրավիճակ է արտահայտում Պարույր Սևակն իր «Մաքսանենգորեն» բանաստեղծության մեջ.

Շուրթերիդ երկու մեծ փակագծում՝
Մի մեծ առեղծված, որ լուծում չունի…
Իսկ ես խոսում եմ, խոսում եմ, խոսում,
Բայց հիմա ես էլ… ե՛ս ինձ չեմ լսում[36]*. (« «)*

Իհարկե, ի վերջո, լռության ենթատեքստն արտահայտելու համար անհրաժեշտ են բառեր, որպեսզի ոչ միայն զրուցակիցները, այլև ընթերցողները, մյուս ունկնդիրները հասկանան, թե ինչի մասին է խոսքը, և այդ ենթատեքստը բոլորի համար դառնա բացահայտ, քիչ թե շատ միանշանակ տեքստ: Սակայն երբեմն արտահայտված բառերը նունպես կարելի է դիտարկել իբրև քողարկված կամ զգեստավորված լռություն: Դրա ցայտուն օրինակը Համլետի պատասխանն է Պոլոնիուսի այն հարցին, թե՝ «Ի՞նչ եք կարդում, տեր իմ»: Համլետի արտաբերած «Բառեր, բառեր, բառեր» պատասխանը ավելի շուտ առեղծվածային շղարշով պատած լռություն է, քան բացահայտ խոսք: Համլետի այդ արտահայտությունը հետաքրքիր է նաև այլ առումով: Երեք անգամ արտաբերած «բառեր»-ը սոսկ առաջին հայացքից նույն իմաստն ունեն: Խորանալով ենթատեքստի մեջ՝ դրանցից ամեն մեկում կարելի է տարբեր իմաստներ բացահայտել[37]*:*

Նման կերպ էր, օրինակ, վարվում Վահրամ Փափազյանը, երբ «բառեր» բառն ամեն անգամ արտաբերում էր ուրույն իմաստավորումով[38]*: Բուռն զգացումները, դրական կամ բացասական հույզերը, անսահման սերն ու վիշտը, որպես կանոն, իմաստուն այրերն արտահայտել ու կրել են լռությամբ՝ խորապես համոզված լինելով, որ լռության լեզուն ավելի պերճախոս է, և լուռ ու մունջ խոսքն իր խորաններում ավելի խորունկ խորհուրդ ունի: Այդ կապակցությամբ՝ ուշագրավ վկայություն են թողել պարսիկ իմաստունները: Երբ մահացել է Քեյկոբաթ արքան, նրա իմաստուններից մեկն ասել է.*

– Երեկ նա շատ էր խոսում, բայց այսօր ավելի ուժեղ է համո-

---

[36] **Սևակ Պ.,** *Մաքսանենգորեն, Ե., 1972, էջ 314:*

[37] **Պետրոսյան Լ.,** *«Լինել թե չլինելու» տրամաբանությունը, Ե., 2010, էջ 44:*

[38] **Փափազյան Վ.,** *Համլետն ինչպես տեսա: Երկեր 5 հատորով, հ. 4, Ե., 1983, էջ 100:*

զում, չնայած ամենևին էլ չի խոսում:[39]

Կարելի է ասել, որ, դեռևս վաղնջական ժամանակներից սկսած, իմաստուն այրերը հասկացել են լռության կարևոր դերը բանավեճի մեջ ու փաստարկման ողջ գործընթացում: Հենրի Ուիլլեր Շոուի (Ջոշ Բիլլինգս) համոզմամբ՝ լռությունը առավել դժվար հերքելի փաստարկներից է[40]:

Լռության կարևոր դերը փաստարկման գործընթացում հատուկ շեշտել է նաև ակադեմիկոս Գ. Բրուտյանը՝ լռությունը համարելով փաստարկման տարատեսակներից մեկը[41]:

Զրուցակիցների կանխատրամադրվածության պարագայում մարդիկ կարող են միմյանց հասկանալ նույնիսկ լուռ ու մունջ, առանց բառերի: Շումանը, որը մի կնոջ հրավիրել էր իր հետ նավակով զբոսնելու և երկու ժամվա ընթացքում ոչ մի բառ չէր արտասանել, հրաժեշտի ժամանակ նրան ասաց. «Ի՜նչ հիանալի էինք մենք այսօր հասկանում միմյանց»[42]: Լռությունը մի այնպիսի խորհրդավոր զրույց է, որի պատվիրաններին ոչ բոլորն են կարողանում հավատարիմ մնալ: Երբ լուռ զրուցակիցներից մեկնումեկը չի դիմադրում գայթակղությանը և փորձում է լռության ենթատեքստը բացահայտել խոսքի միջոցով, ապա հայտնվում է զավեշտալի վիճակում: Նման իրավիճակներով հարուստ են ժողովրդական սրամտությունները: Ահա այդ իրավիճակի մի ցայտուն օրինակ.

Վարդանուշն ու Աթանեսը գյուղի ճամփով գնում են այգիները: Երկուսն էլ լուռ են:

– Վարդանո՛ւշ, ինչի՞ մի խոսք չես ասում,- ճանապարհի կեսին հարցնում է Աթանեսը:

– Խոսք ասեմ, վախենամ միտքդ փոխվի,- պատասխանում է Վարդանուշը:

– Է՜ է՜ է՜, էս մեր հալ ու հարաքյաթին էդ էր պակաս,- տրտնջում է Աթանեսը:

– Դե որ միտքդ չի փոխվելու, էլ ի՞նչ խոսեմ,- ամփոփում է Վարդանուշը[43]:

Երբ զրուցակիցները լռություն են պահպանում, դա դեռ չի նշանակում, թե նրանք զրույցի ընդհանուր թեմա կամ ասելիք չունեն: Հաճախ հենց շատ բան ասելու ցանկությունն ու երկար սպասված հանդիպումն է, որ զրուցակիցներին ստիպում է լռել: Հոգեբանական այդ զգացումը ոչ միայն կարող է լինել զուտ անձնական, այլև պատմական ճակատագրով և ազգային արժեքային համակարգով, հոգեկերտվածքով պայմանավորված գործոն: Այդ զգացումը քնարական և հոգեբանական նուրբ վարպետությամբ է արտահայտել ամերիկահայ բանաստեղծուհի Դայանա Տեր-Հովհաննիսյանը՝ «Երկու հայ զբոսնում են կիրակի օրը» բանաստեղծության մեջ: Ներկա-

---

[39] **Աբուլ-Ֆարաջ,** *նշվ. աշխ., էջ 33:*

[40] *http://letter.com.ua/aphorism/mol9.php*

[41] **Брутян Г.,** *Очерк теории аргументации, Е., 1992, с. 74.*

[42] **Մորուա Ա.,** *նշվ. աշխ., էջ 324:*

[43] *Հայոց լեզու և գրականություն, 2004, N 1-2, էջ 126:*

յացնելով հայերին բնորոշ զրույցը սկսելու և վարելու դրվագները՝ նա նկատում է.

…Եվ երբ երկու հայ
լռում են,
այդ չի՛ նշանակում,
թե նրանք ասելիք չունե՛ն…[44]

Ճապոնացիները, ովքեր ազգային հոգեկերտվածքը անաղարտ պահելը դարձրել են պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը՝ դեռևս վաղնջական ժամանակներից հասկացել են, որ լռության լեզուն ավելի պերճախոս է ու համոզիչ, քան շաղակրատանքը: Այդ իսկ պատճառով էլ նրանք սիրում են ասել. «Եթե երկու ճապոնացի իրար հետ զրուցում են կես ժամ, ավելի քիչ են իրար հասկանում, քան եթե կես ժամ միասին լռում են»[45]*: Ճապոնիայում եղած իր տպավորություններում Գ. Բրուտյանը նշում է. «Շատ երկրներում նկատել եմ, որ խոսքը լռության շարունակությունն է: Մարդիկ լռում են, բայց հետո բացվում և սկսում խոսել: Ու արդեն իմանում ես, թե ինչ են մտածում, երբ նրանք լռում են: Ճապոնացիների մոտ հակառակը նկատեցի: Ավելի ստույգ, նրանք սիրում են լռել ոչ միայն խոսելուց առաջ, այլև խոսելուց հետո, իսկ երբեմն էլ՝ խոսելու փոխարեն»*[46]*: Հարկ է նշել, որ լռության հանդեպ ճապոնացիների վերաբերմունքը պետք է դիտարկել համատեքստում: Ճապոներենի բացատրական բառարանում ընդգծվում է, որ լռությունը ոչ թե հաղորդակցման վակուում է, այլ մի վիճակ, երբ զրուցակիցը ստիպված է զսպել իր մտքերի ու ապրումների արտաքին դրսևորումը: Լռությունը հաճախ օգտագործվում է որպես մերժելու նշան՝ ի պատասխան անծանոթների կամ սակավ ծանոթների խնդրանքի*[47]*:*

Հաղորդացության ընթացքում լռության դերը կարևորող ճապոնացիները միևնույն ժամանակ սիրում են ասել. «Զգուշացիր նրանից, ով լռում է»[48]*:*

Յուրաքանչյուր ժողովրդի ազգային հոգեկերտվածքի մեջ կարևոր դեր ունեն նաև պատմական-աշխարհագրական խորհրդանիշները: Հայ ժողովրդի կյանքում այդ առումով առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես Արարատ լեռը, որի լռության ենթատեքստերում հայերը իրենց պատմական ճակատագրի և կորուսյալ հայրենիքի ազատագրման բանալին են որոնում: Նման տեսանկյունից բավականին հետաքրքիր է Գարեգին Նժդեհի հետևյալ խորհրդածությունը.

– Ի՞նչ են ասում սարերն իրենց խրոխտ լռության մեջ,- հարցրի իմաստունի անուն հանած մի ծեր լեռնականի:

Հայացքը դեպի հայրենի կատարները դարձնելով, նա լռեց մի պահ՝ կարծես նրանցից պատասխան էր սպասում, ապա իմաստաբանեց.

---

[44] **Էմին Գ.,** *նշվ. աշխ., էջ 87:*

[45] **Բրուտյան Գ.,** *Գիտական աշխատանքի տեխնոլոգիան, Ե., 2010, էջ 199:*

[46] **Բրուտյան Գ.,** *Շընթերցված գրքի էջերից, Ե., 1987, էջ 87:*

[47] *Տե՛ս* **Պրոննիկով Վ. Ա., Լադանով Վ. Ա.,** *Ճապոնացիները, Ե., 1989, էջ 266:*

[48] *Նույն տեղում, էջ 272:*

_ Լեռներն ասում են պահիր մեզ, լեռնական, որ մենք էլ քեզ պահենք[49]:

Իսկ ինչո՞ւ է լռությունն ավելի շատ բան ասում, քան խոսելը: Հնագույն ժամանակներում այդ հարցը մեկնաբանվել է իմաստության նկատմամբ խոսքի և լռության հարաբերության տեսանկյունից: Քանի որ խորունկ խելքի և իմաստության գրավականը և առհավատյան հակիրճ խոսքն էր, հետևաբար, ինքնին հասկանալի պատճառներով, նախապատվությունը տրվել է ոչ թե խոսքին, այլ լռությանը: Այն, փաստորեն, դիտվել է իբրև աստվածային շնորհ, որը հասու է եղել ոչ բոլորին, այլ սոսկ իմաստուններին: Նման դիրքորոշումը, ըստ էության, լիովին չի բացահայտում լռության գերակա լինելը խոսելու նկատմամբ: Խնդիրը առավել հիմնավոր և համոզիչ է ներկայացնում ակադեմիկոս Գ. Բրուտյանը. «Երբ խոսում ես, միշտ չի, որ կարող ես ասել այն ամենը, ինչ ցանկանում ես: Խոսելը, ինչքան էլ անվերջ լինի, այնուամենայնիվ, սահմանափակ է: Այստեղ գործում է այն հարաբերությունը, ինչը տեղի ունի տեքստի (նաև համատեքստի) և ենթատեքստի միջև: Այն, ինչ որ ասված է տեքստում, եթե նկատի ունենաս նաև տողերի արանքի դատարկությունն անգամ, շատ ավելի քիչ տողերի արանքի դատարկությունն անգամ, շատ տեղեկություն է տալիս, քան կարող է պարունակել լռությունը»[50]:

Լռության և խոսելու միջև առկա հարաբերությունը կարելի է նմանեցնել նաև չիմացության և իմացության միջև գոյություն ունեցող հարաբերությանը: Ինչպես մեր չիմացածն է մեր իմացածի համեմատ անսահման, այնպես էլ՝ խոսելու համեմատ անսահման ու անեզր է մեր լռությունը: Այդ անսահմանությունը հասանելի չէ մեր հինգ զգայարաններին: Մենք այն կարող ենք տեսնել ու ըմբռնել միայն վեցերորդ զգայարանի շնորհիվ: Այդ առումով՝ ուշագրավ և համոզիչ է Գ. Բրուտյանի՝ երգիչների կողմից փակ աչքերով երգելու բացատրությունը. «Որովհետև բաց աչքերով ավելի քիչ բան են տեսնում, քան փակ աչքերով»:[51] Հարկ է նշել, որ փակ աչքերով երգելը և փակ աչքերով տեսնելը պատմական խոր արմատներ ունեն: Աշուղների և գուսանների մեծ մասն ի ծնե կամ մանկուց կույր են եղել: Եվ, որքան էլ զարմանալի է, նրանք կույր աչքերով ավելին են տեսել, քան զույգ աչքերով զինված մյուս մարդիկ: Ասվածի վառ վկայությունը կույր հանճար Հոմերոսն է: Նա անսահման և այնքան հարուստ աստվածային ու մարդկային աշխարհներ է տեսել, որը հասանելի չէ բաց աչքերով մարդկանց: Նույն կերպ մեկ այլ հանճար, սակայն այս դեպքում խուլ Բեթհովենը կարողացավ լսել լռության երաժշտությունը և այն ավելի պերճախոս մեղեդիներով ներկայացրեց մարդկությանը:

Լռության ենթատեքստերը կույր աչքով «տեսնելու» շնորհը հենց այդ համատեքստին համահունչ է մեկնաբանում Պ. Սևակը՝ իր «Միաչքանին» բանաստեղծության մեջ.

---

[49] **Նժդեհ, Գ.,** *Ընտիր երկեր, Ե., 2007, էջ 261:*

[50] **Բրուտյան Գ.,** *Գիտական աշխատանքի տեխնոլոգիան, էջ 199:*

[51] *Նույն տեղում, էջ 199-200:*

Մի աչքով եմ նայում կյանքին:
(Երկրորդ աչքս ապակուց է):
Եվ մի հատիկ իմ այս աչքով
Շատ եմ տեսնում,
Իսկ երկրորդով՝ ավելի՛ շատ,
Որովհետև
Առողջ աչքով ես տեսնում եմ,
Իսկ կույր աչքով… մի՛շտ երազում…[52]

Հակադրվելով խոսելուն՝ լռությունը համահունչ է դառնում լսելուն: Ինչպես իրավացիորեն նկատել է Գ. Բրուտյանը՝ «լսել» նշանակում է լռել: Չնայած, ըստ երևույթին, անհրաժեշտ է լռել, որպեսզի լսել»[53]*:*

Լռությունը դրսևորվում է տարբեր պարագաներում, որով էլ հիմնականում պայմանավորվում է նրա ենթատեքստերի բովանդակությունը: Մարդիկ լռում են ոչ միայն ունկնդրելու ժամանակ, այլև լսելուց հետո: Լսելու պահին լռության պահպանումը ինքնին հասկանալի է, և այդ լռությունը որևէ այլ ենթատեքստեր չի կարող ունենալ, քանզի եթե չլռես՝ չես կարող լսել: Եթե զրույցի պահին զրուցակցին չես լսում, նշանակում է՝ լսում ես մեկ այլ բան: Տվյալ դեպքում՝ մարդու զրուցակցի դերում հանդես է գալիս հենց ինքը, քանի որ նա ունկնդրում է իր ներքին ձայնին: Զրուցակցի խոսքը լսելուց հետո որոշ ժամանակ լռություն պահպանելը պայմանավորված է մի շարք գործոններով, և այդ լռությունն ունի իր ենթատեքստերը: Երկխոսության կամ բանավեճի ժամանակ լռությունը կարող է պայմանավորված լինել մրցակցի կամ հակառակորդի փաստարկների զորեղությամբ կամ առաջադրած պայմանների անհաղթահարելիությամբ, տրված խնդիրները լուծելու անհնարինությամբ: Երբ Զևսի ժամանակավոր զորակցությամբ ոգևորված Տրոյացի Հեկտորը մենամարտի է հրավիրում հակառակորդի զինվորներին, նրան ոչ ոք չի պատասխանում: Հոմերոսի խոսքերով ասած՝

…ու մընացին բոլորը լուռ ու կարկամած.

Թե ո՞րն էր նրանց լռության պատճառը կամ ենթատեքստը, Հոմերոսն ինքը բացահայտում է հաջորդ տողում.

Հրաժարվելն ամոթ էր խիստ, իսկ ընդունելն երկյուղալի[54]*:*

Հին Հունաստանում սոփեստներն առաջադրում էին այնպիսի հարցեր, որոնց հնարավոր չէր պատասխանել այո կամ ոչ, ինչպես իրենք՝ հարցադրողներն էին պահանջում: Դրա ցայտուն օրինակը հետևյալ հարցադրումն է՝ «Դու դադարե՞լ ես քո հորը ծեծել»: Զրուցակցին այլ ելք չէր մնում, քան լռել: Եթե նա պատասխաներ «այո», նշանակում է ժամանակին հորը ծեծել է և հետո դադարել ծեծելուց: Իսկ եթե նա ասեր «ոչ»՝ կնշանակի, որ նա ծեծել և դեռ շարունակում է ծեծել իր հորը: Ոմանք կարող են ասել, թե այդ հար-

---

[52] **Սևակ Պ.,** *Միաչքանին, Ե., 1972, էջ 44:*
[53] **Брутян Г.** *Очерк теории аргументации, с. 114.*
[54] **Հոմերոս**, *Իլիական, թարգմանություն Մ. Խերանյանի, Ե., 1987, էջ 143:*

ցաղրումն այնքան էլ անլուծելի չէ, և հանուն գրագը շահելու գրուցակիցը պետք է դրական պատասխան տար: Սակայն, պարզվում է, որ Հին Հունաստանում նա, ով անտեղի վատնում է հոր հարստությունը, ենթարկվում է հասարակական պարսավանքի կամ էլ քրեական պատասխանատվության, իսկ հորը ծեծելու համար՝ մահապատիժն անխուսափելի էր:

Լռությունը կարող է պայմանավորված լինել տրված խոստումը չդրժելու, պատանդության մեջ հայտնված հարազատներին փրկելու, վերադասի կամքին չհակառակվելու, արտաքուստ համաձայնություն հայտնելու և զանազան այլ հանգամանքներով:

Գրական ստեղծագործություններում, հատկապես երկխոսությունների ժամանակ, հեղինակները գրուցակիցների հոգեկան վիճակն արտահայտելու կամ էլ տրված հարցը կշռադատելու պահը շեշտելու համար փակագծերում նշում են «լռություն», «երկար լռություն», «տիրեց քար լռություն» և այլն: Սակայն դրանով լռության ենթատեքստը չի բացահայտվում: Պարզապես նշվում է լռության պատճառը: Սա նշանակում է, որ լռության պատճառն ու ենթատեքստը կարող են չհամընկնել: Լռության ենթատեքստ ասելով՝ մենք նկատի ունենք այն, ինչ թաքնված է կամ գտնվում է տվյալ լռության ներքո:

Ամեն մի լռություն ունի իր ենթատեքստը կամ, ավելի ճիշտ, ենթատեքստերը: Պատկերացնենք մի այսպիսի իրադրություն. ինչ-որ մեկին բռնել են հանցանքի վայրում, և նա, քննիչների հարցերին ի պատասխան, միայն լռում է: Քննիչների, նաև ներկաներից ոմանց կարծիքով՝ այդ լռությունը կարելի է մեկնաբանել իբրև համաձայնության նշան, այսինքն՝ կատարված հանցագործության ընդունում: Քննիչներից մեկը նրա լռությունը կարող է մեկնաբանել որպես հանցակիցներին թաքցնելու կամ պատասխանատվությունից խուսափելու փորձ: Ներկաներից ոմանք կարող են եզրակացնել, որ այդ լռության ներքո թաքնված է մի մեծ գաղտնիք: Ոմանք էլ այդ լռությունը կարող են մեկնաբանել իբրև տոկունության, անմեղության, հերոսության կամ էլ՝ ստեղծված անելանելի վիճակից դուրս գալ չկարողանալու անզորության վկայություն: Կանանցից մեկն էլ կարող է բացականչել՝ «բայց, այնուհանդերձ, ի՜նչ գեղեցիկ է նրա լռությունը»: Այդ համատեքստում լռությունը կարող է ունենալ բազում ենթատեքստեր: Սակայն հնարավոր է, որ այդ լռությունը մի շատ պարզ պատճառ ունենա և պայմանավորված լինի հանցանքի վայրում պատահմամբ հայտնված մարդու՝ ի ծնե խուլ ու համր լինելու հանգամանքով:

Հրապարակախոսության և լրագրության մեջ լռություն հասկացությունը հաճախ կիրառվում է արտահայտելու համար դիտարկվող հիմնախնդրի՝ հանրության համար անծանոթ կամ հրապարակման ոչ ենթակա լինելու հանգամանքը: Այսպես օրինակ՝ գենդերային բռնության հիմնախնդիրներին նվիրված իր հոդվածը լրագրող Լիլիթ Քոչինյանը վերնագրել է «Լռության տարածք»[55]: Եգիպտոս

[55] *Տե՛ս Կինը և քաղաքականությունը, Ե., 2009, էջ 3:*

այցելած և բուրգերով զմայլված պատմաբան Էդուարդ Դանիելյանը իր տպավորություններն արտահայտող հոդվածը վերնագրել է «Քարացած լռություն, որի միջոցով հոսում է ժամանակը»[56]:

Շատերը համոզված են, որ այնպիսի վեհ ու խորունկ զգացում, ինչպիսին սերն է, նույնպես հնարավոր չէ արտահայտել բառերով, հետևաբար՝ սիրո, ինչպես նաև անսահման երջանկության արտահայտման լավագույն ձևը լռությունն է: Շեքսպիրի հերոսներից մեկը՝ Կլավդիոն, նկատում է. «Լռությունն ուրախության լավագույն մունետիկն է: Ես նվազ երջանիկ կլինեի, եթե կարողանայի ասել, թե ինչքան երջանիկ եմ»[57]: «Ճշմարիտ սերը… լեզու չունի» հայտարարում է Շեքսպիրի մեկ այլ հերոս՝ Պրոտեոսը[58]:

Սիրո և դրա հետ կապված խորհուրդների լռությունը բավական գեղեցիկ է արտահայտել Վլադիմիր Նաբոկովն իր “Поэты” *բանաստեղծության մեջ.*

…
Сейчас переходим с порога мирского
В ту область… как хочешь ее назови:
Пустыня ли, смерть, отрешенье от слова,
Иль, может быть, проще: молчанье любви.

Молчанье далекой тележной,
Где в пене цветов колея не видна,
Молчанье отчизны – любви безнадежной-
Молчанье зарницы, молчанье зерна[59].

Լռության՝ որպես տառապանքի, զգացումի ու զգացմունքների բազմիմաստ արտահայտության դրսևորում են անվանի հայ թատերագիր Ժորա Հարությունյանի բանաստեղծական տողերը.

Իմ լռությունը ճիչ է, որոտ է,
Սեր է, կարոտ է իմ լռությունը ...
Իմ լռությունը ցավ է, խռովք է,
Կռիվ է, խանդ է իմ լռությունը ...

Իմ լռությունը ծով տառապանք է,
Թախիծ է, վիշտ է իմ լռությունը ...
Իմ լռությունը անարդար դատ է,
Արևամուտ է իմ լռությունը ...[60]

---

[56] **Շողակն Արարատյան,** *2011, հունվ., N 1, (257), էջ 4:*

[57] **Շեքսպիր Վ.**, *Իզուր տեղը մեծ աղմուկ□, Ընտիր երկեր 3 հատորով, հ. II, Ե., 1953, էջ 508:*

[58] **Շեքսպիր Վ.,** *Վերոնայի երկու ազնվականները, Ընտիր երկեր 3 հատորով, հ. II, Ե., 1953, էջ 154:*

[59] **Набоков В.** *Стихотворения, М., 1991, с. 174.*

[60] **Հարությունյան Ժ.,** *Իմ լռությունը (բանաստեղծությունների ընտրանի) (Պատուհան դեպի հավերժություն, Ե., 2013, էջ 138):*

Անսահման վշտի և տառապանքի արտահայտման առումով ևս լռությունն ավելի պերճախոս է, քան խոսքն ու ողբն են: Եգիպտական Մեմփիս քաղաքը գրավելուց հետո պարսից արքա Կամբյուսեսը անարգում է Պսամմենիտոս թագավորին և նրա աղջկան, իսկ տղային ենթարկում մահապատժի: Այդ ամենը տեսնելով՝ եգիպտացիները լալիս էին ու բարձրաձայն հառաչում, սակայն Պսամմենիտոսը մնաց անվրդով և ոչ մի խոսք չարտաբերեց: Իսկ երբ նա տեսավ տարիքն առած և իր ամբողջ ունեցվածքը կորցրած սեղանակիցներից մեկին ողորմածություն խնդրելիս՝ սկսեց բարձրաձայն լաց լինել: Կամբյուսեսի բանբերի զարմացած հարցին Պսամմենիտոսը պատասխանեց. «Իմ տան դժբախտությունը շատ մեծ է, որպեսզի այդ ամենի մասին ողբամ»[61]:

Այդ և համանման այլ դեպքեր համակողմանիորեն դիտարկել է Միշել Մոնտենը՝ «Վշտի մասին» իր ուսումնասիրության մեջ[62]: Կոմիտասի կյանքի ողբերգությունն արտահայտելիս Եղիշե Չարենցը խորունկ կերպով նկատում է.

Ո՛չ խոհերի, ո՛չ հացի
Նա չունեցավ բարեկամ,
Լռությունից իր բացի[63]:

Կոմիտասի լռության ենթատեքստերը Չարենցը բացահայտում է ոչ որպես հուղարկավորվող ննջեցյալի լռություն, այլ իբրև մի նոր երաժշտություն, որն ավելի անհուն է ու խորին, քան նրա բոլոր մշակած երգերն են: Ննջեցյալների և շիրմաքարերի լռությունը ենթատեքստերի բացահայտման տեսակետից, թերևս, ամենադժվարինն է: Ինչպես նշում է Գ. Բրուտյանը՝ «Գերեզմանատան լռությունն ամենալուռ լռությունն է»[64]: Ինքնին հասկանալի է, որ մահացած մարդը ի զորու չէ ոչինչ ասելու: Փակ են ոչ միայն նրա շուրթերը, այլև աչքերը: Սակայն այդ համատարած լռության մեջ կան բազում խոսքեր, որոնք ունեն տարբեր իմաստներ և երբեք միանշանակ չեն ըմբռնվի հանգուցյալի հարազատների կողմից: Այդ լռության մեջ կա և՛ շնորհակալություն, և՛ դժգոհություն, և՛ սեր, և՛ ատելություն, կա ինչպես օրհնանք, այնպես էլ՝ անեծք: Ցանկության դեպքում ներկաները կարող են լսել այդ լռությունը, սակայն հաճախ նրանք զրուցում են այլ թեմաների շուրջ: Եվ եթե նույնիսկ ոմանք էլ ողբում են, դժվար է ասել, թե իրականում ի՞նչ կա նրանց և ցավը լռությամբ կրողների հոգու խորաններում:

Ուշադրության դեպքում հնարավոր է կարդալ նաև շիրմաքարերի լռությունը, որը երբեմն կամ հաճախ ամենևին չի համընկնում տապանաքարերի գրությունների հետ: Այդ լռության միջից իբրև ենթատեքստ կարելի է լսել ննջեցյալի աղաղակը. «Իմ ինչին են պետք այս բոլոր ճոխ արարողությունները, երբ կենդանությանս օրոք մի օր անգամ հարգանքի չարժանացա»: Հայկական ժողովրդա-

---

[61] **Հերոդոտոս,** *Պատմություն ինը գրքից, Ե., 1986, էջ 164:*
[62] *Տե՛ս* **Մոնտեն Մ.,** *Փորձեր, Ե., 1991, էջ 11-14:*
[63] **Չարենց Ե.,** *Կոմիտասի հիշատակին, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 3, Ե., 1987, էջ 300:*
[64] **Բրուտյան Գ.,** *Շրջաբերցված գրքի էջերից, էջ 80:*

կան «Գնա մեռի՝ արի սիրեմ» արտահայտությունը, ըստ երևույթին, շիրմաքարերի լռության ենթատեքստի վերծանման ու ննջեցյալների բողոքի ցայտուն օրինակ է:

Հուղարկավորությանը բնորոշ լռությունը բառերով արտահայտելիս խախտում ենք լռության խորհրդավորությունն ու անդորրը: Դրա բնորոշ օրինակը Վահան Տերյանի հետևյալ տողերն են.

Ինձ անլաց թաղեք, ինձ անխոս թաղեք.
Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անսահման…[65]*:*

Երեք անգամ շեշտված լռությունը մեղմ ու անուշ, նուրբ և քընքուշ իրավիճակին մի անասելի և անգուսպ աղաղակ է հաղորդում: Ասվածից կարելի է ենթադրել, որ որոշակի կապ գոյություն ունի նաև լռության և աղմուկի միջև: Հայերենում ինչպես խոսքի, այնպես էլ՝ տարբեր ձևերի աղմուկների հակոտնյան լռությունն է: Ռուսերենում այդ ներհակությունը արտահայտվում է երկու տարբեր բառերով. «խոսքին» հակադրվում է “молчанье” *բառը, իսկ «աղմուկին»՝* “тишина” *բառը:*

Ինչպես հայերեն «լռություն», այնպես էլ ռուսերեն “молчанье”, “тишина” *բառերի հնչյունային կառուցվածքն անգամ վկայում է, որ դրանք համր ու անխոս չեն և որոշակի աղմուկ են պարունակում: Սակայն այդ աղմուկը համահունչ չէ լռության բուն ենթատեքստի հետ, քանզի հայերեն «ռ», «թ», իսկ ռուսերեն՝* “փ”, “Ք” *հնչյունների զուգորդմամբ ներկայացված աղմուկը ոչ թե ենթատեքստ է, այլ անթաքույց հնչյունախաղ: Մյուս կողմից՝ ինչպես հիմնավորում է Գ. Բրուտյանը՝ «միշտ չէ, որ լռությունը ամենամեղմ աղմուկն է, իսկ աղմուկը՝ շռնդալից լռություն»*[66]*:*

Ինչպես արդեն նշել ենք՝ լռությունը խոսքի ենթատեքստն է: Գրավոր խոսքում լռություն-ենթատեքստը թաքնված է տողերի տակ կամ էլ՝ հեղինակի նշած բազմակետերում: Ապավինելով միայն հեղինակի ասած բառերին՝ մենք երբեք ամբողջովին չենք ըմբռնի բուն ասելիքը և ստեղծագործության իմաստն ու ոգին: Գրողներն իրենց հիմնական ասելիքը թաքցնում են լռության գաղտնարան-ներում տարբեր պատճառներով: Ոմանք դրանով փորձում են խուսափել քաղաքական հետապնդումներից, իսկ ոմանք էլ մտորելու և երևակայելու հնարավորություն են ընձեռում ընթերցողներին՝ դրանով իսկ նրանց դարձնելով իրենց ստեղծագործության համահեղինակը: Գիտական-իմացաբանական առումով առավել կարևոր է հենց այդ լռությունը, որի ենթատեքստերը օվկիանոսի և տիեզերքի նման անսահման են: Լռության ենթատեքստն ունի իր շարահյուսությունն ու ձևաբանությունը: Ինչպես ամեն մի լեզու ունի իր լռությունը, այնպես էլ լռությունն ունի իր ուրույն լեզուն: Բավական խորունկ միտք է պարունակում Ստանիսլավ Լեցի հետևյալ պատմությունը. «Նույնիսկ նրա լռության մեջ կային քերա-

---

[65] **Տերյան Վ.,** *Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում, Ե., 1985, էջ 39:*

[66] **Բրուտյան Գ.,** *Իմաստասիրությունը երկխոսություններում, գիրք 2, էջ 120-127:*

կանական սխալներ»[67]: XVII դ. իտալացի նկարիչ Սալվատոր Ռոզայի ինքնանկարի վրա լատիներեն գրված է. «Կամ լռիր, կամ ասա այն, ինչ լռելուց լավ է»[68]:

Խորին խորհուրդ պարունակող այդ միտքը առավել ինքնատիպ կերպով է իմաստավորվել XX դ. անվանի փիլիսոփա Լյուդվիգ Վիտգենշտայնի հետևյալ հանրահայտ ասույթում. «Ինչի մասին անհնարին է խոսել, այդ մասին պետք է լռել»[69]: Եթե խոսքն իբրև բացահայտ տեքստ իր ակնհայտության շնորհիվ ինչ-որ տեղ, գուցեն, վերջավոր է, ապա լռությունը որպես ենթատեքստ, իբրև ոչ բացահայտ, անտարակույս, անվերջ ու անսահման է: Լռությունը որպես ենթատեքստ բացահայտել տեքստի միջոցով նույնն է, թե ընդգրկել անընդգրկելին: Հետևաբար, լռության իմաստը պետք է որոնել նախևառաջ հենց... լռության մեջ: Պատահական չէ, որ լինել թե չլինելու խորհուրդը որոնող Համլետն իր խոսքն ավարտել է «մնացորդը լռություն» բառերով: Այլ խոսքով՝ «լռությունը որպես ենթատեքստ» պետք է բացահայտվի ոչ միայն և ոչ այնքան տվյալ տեքստի և համատեքստի, որքան տողատակերի և չասվածի ու չգրվածի մեջ: Այլ խոսքով՝ մնացյալը լռություն է կամ լռության մեջ:

МОЛЧАНИЕ КАК ПОДТЕКСТ

ПЕТРОСЯН Л. М.

Резюме

Вслух сказанное слово принято считать текстом, а молчание – подтекстом, который также имеет свои подтексты. Сущность этих подтекстов рассматривается не только с философской и логической точек зрения, но и с позиции психологии.

Выявление генетических причин и гносеологического значения молчания не умаляет значения слова и общения посредством речи, при этом отдается предпочтение молчанию как своеобразному виду общения, поскольку молчание также являет собой вид коммуникации, богатый подтекстами. Следует добавить, что молчание порою бывает красноречивее слова.

---

[67] http://letter.com.ua/aphorism/mol9.php

[68] **Բրուտյան Գ.**, *Հընթերցված գրքի էջերից, էջ 88:*

[69] **Витгенштейн Л.** *Логико-философский трактат, М., 1958, с. 97.*

SILENCE AS A SUBTEXT

L. PETROSIAN

Abstract

Although the aloud recited word is regarded as a text and the silence as a subtext, it also, in its turn, has own subtexts. The essence of these subtexts is considered not only from philosophical and logical points of view but also from position of psychology.

The revelation of genetic reasons and gnosiological meaning of silence do not reduce the meaning of the word and communication by means of speech, by which the preference is given to the silence as a peculiar kind of communication, rich in contexts. Thus the silence is sometimes more expressive than any kind of speech.

What was said above is confirmed by examples from fiction, poetry and also through expressions of ancient thinkers and philosophers.